ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2023 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ- ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)













* Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները,

** Այլ հարկային եկամուտներում ներառված են` ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև` ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային ֆոնդին մուտքագրված գումարները)

2023 թ. հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 461,4 մլրդ դրամ, որը կազմում է 2023 թվականի առաջին եռամսյակի բյուջեով հաստաված ցուցանիշի 103,2 %-ը:

2023թ. հունվար-մարտի փաստացի ցուցանիշը 2022 թ. ցուցանիշից ավել է 15,2%-ով կամ 60,8 մլրդ դրամով, 2021թ.-ից ավել է 38,6%-ով կամ 128,5 մլրդ դրամով, 2020թ. ցուցանիշին գերազանցում է 32,2%-ով կամ 112,3 մլրդ դրամով, 2019 թ. ցուցանիշից ավել է 54%-ով կամ 161,4 մլրդ դրամով և 2018-ից` 92,3%-ով կամ 221,5 մլրդ. դրամով:

2023 թ. հունվար-մարտ ամիսներին`

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 165,6 մլրդ դրամ, որը 2022 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 16,5%-ով, 2021թ.-ից ավել է 41,9%-ով, 2020 թ.-ից ավել է 38,8 %-ով, իսկ 2019 թ. `ից 50,3 %-ով, և 2018թ. ավել է 59,8 %-ով:
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 32,5 մլրդ դրամ, որը 2022 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 36,1%-ով, 2021 թ.-ից ավել է 75,7% -ով, 2020 թ.-ից ավել է 19,5%-ով, 2019-ից ավել է 38,9%-ով 2018 թ.-ից ` ավել է 36,2%-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 133,0 մլրդ դրամ, որը 2022 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 17,8 %-ով, 2021 թ.-ից ավել է 22,1 %-ով, 2020թ-ից, 2019 թ.-ից և 2018թ-ից ավել է համապատասխանաբար` 21,5 %-ով , 38,8 %-ով և 58,1%-ով
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 39,0 մլրդ դրամ, որը 2022թ. համապատասխան ցուցանիշից ավել է 3,2%-ով, 2021 թ.-ից ավել է 60,7%-ով, 2020 թ.-ից ` շուրջ 3,0 %-ով, 2019թ. ցուցանիշից ավել է 100 %, 2018թ-ից ավել է 28,4%-ով,
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 16,3 մլրդ դրամ, որը 2022 թ. ցուցանիշից ավել է 21,5%-ով, 2021թ.-ից պակաս է 17,1%-ով, 2020թ ցուցանիշից պակաս է 3,5 %-ով, 2019թ.-ից ` պակաս է 13,1%-ով , և 2018թ ցուցանիշից պակաս է 12,1% -ով
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 10,6մլրդ դրամ, որը 2022թ. ցուցանիշից ավել է 1,5%-ով, 2021թ. ցուցանիշից պակաս է 4%-ով, 2020թ. ցուցանիշը գերազանցում է 33,2%-ով, 2019թ.-ից ավել է 50,9%-ով և 2018թ ցուցանիշից ավել է 28,4%-ով
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 13,0 մլրդ դրամ, որը 2022 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 31,3%-ով, 2021 թ. -ից ավել է 68,7%-ով, 2020 թ.-ից ավել է 45,2 %-ով, 2019 թ.-ից ավել է 74,7%-ով, 2018 թ.-ից ավել է 141,5%-ով,
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 21,4 մլրդ դրամ, որը 2022 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 48,1%-ով, 2021թ,-ից ավել է 112,9%-ով, 2020 թ.-ից ավել է 267,0%-ով և 2019 թ.-ից` 348,8%-ով, իսկ 2018թ-ից ավել է 357,1%-ով
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են շուրջ 17,5 մլրդ դրամ, որը 2022 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 45,3 %-ով, 2021թ. -ից ավել է 96,5%-ով, 2020 թ.-ից ավել է 200,3%-ով, 2019 թ.-ից շատ է 343,9 %-ով, իսկ 2018թ-ից ավել է 240,6%-ով
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 12,6 մլրդ դրամ, որը 2022 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 47%-ով, 2021 թ. -ից ավել է 72,6%-ով, 2020 թ.-ից ավել է 27,3%-ով , 2019 թ.-ից շատ է 56,2 %-ով, իսկ 2018թ-ից ավել է 69%-ով:

Տեղեկատվության աղբյուրը` «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2022թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2111-Ն որոշում և ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվություն 2018-2023թթ. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ